

18.

ԼԵՈՆԱՅԻՆ (ԼԵՈՆԱԱՆՏԱՈՒԱՅԻՆ) ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ XX ԴԱՐՈՒՄ և ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՐԱ

ՍՈՒՐԵՆ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Լեռներում, մանավանդ, անտառապատ մարտական գործողությունների վարումը կապված է մեծաթիվ հավելյալ դժվարությունների հետ, որի պատճառով զորավարները հնագույն ժամանակներից ձգտել են պատերազմի ելքը վճռող ճակատամարտերը վարել դաշտավայրերում և միայն ծայրահեղ դեպքերում են բարձրացել լեռներ ու վտանգել իրենց զորքերը: Սույն հոդվածում կփորձենք վերլուծել և ընդհանրացնել վերջին հարյուրամյակի պատերազմների դասերը, բացահայտել դրանց ազդեցությունն Արցախյան պատերազմի¹ և հաջորդող զինադադարի ընթացքում հայոց բանակաշինության վրա:

¹ Ռազմարվեստում ընդունված գնահատման համակարգի համաձայն, հակամարտությունը միայն 1990 թ. ձեռք բերեց պատերազմին բնորոշ բոլոր գծերը: ԼՂԻՄ-ի լիակատար շրջափակումով, ՀեՍՀ-ի հյուսիս-արևելյան շրջանների և 1990 թ. հունվարին Արարատի շրջանի երասխավան գյուղի ուղղությամբ հարձակումների արդյունքում աստիճանաբար սկսեց ձևավորվել հակամարտության գիծը: Այդ ընթացքում փոխադարձ հակակրանքը և բախման քողարկված դրսևորումները վերաճեցին բացահայտ զինված ընդհարման: Այդ պատճառով ռազմարվեստը վերլուծելիս հատուկ ուշադրություն կդարձնենք 1990-1994 թթ-ի մարտական գործողությունների վրա:

1945թ. սեպտեմբերի 2-ին ավարտվեց պատմությունը հայտնի ամենամեծ և ամենաավերիչ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմը (ԵՀՊ), որը մինչ օրս պահպանում է ցավալի առաջնությունը մասնակիցների (երկու կողմից՝ ավելի քան 110 մլն. մարդ), մարդկային զոհերի (մոտ 60 մլն.), ավերված կամ կիսավեր բնակավայրերի քանակով և ավերիչ ուժով նախկինում հայտնի գեներալից որակապես տարբերվող միջուկային գեների կիրառումով:

ԵՀՊ-ի առաջին իսկ արդյունքներն ամփոփելով՝ քաղաքակիրթ մարդկությունն ահազանգ հնչեցրեց: Ապագա մարտահրավերներին դիմակայելու համար պետք էր մշակել զինված ընդհարման տարածմանը խոչընդոտող, այն տեղայնացնող, ինչ-որ տեղ նաև՝ ընդհարումների «ինքնակազմակերպման» համակարգ: Այդ նպատակով 1945 թ. սեպտեմբերին ստեղծվեց ՄԱԿ-ը, 1949 թ. ընդունվեցին Ժնևյան չորս կոնվենցիաները² և այլն: Այս համակարգով սահմանափակվող ու հակամարտությունն անմիջականորեն չմասնակցող պետությունների կողմից ընդհարման մասշտաբները չմեծացնելու ձգտման արդյունքում «փակ տարածքում զարգացող» զինված ընդհարումներն ընդունված է կոչել տեղային կամ լոկալ պատերազմներ (զինված ընդհարումներ): Նոր տիպի պատերազմներին օբյեկտիվորեն նպաստում էր երկու միջուկային գերտերությունների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև սկսված «սառը պատերազմը» (1946-1991 թթ.):

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նույնիսկ ամենաընդգրկուն տեղային պատերազմներն իրենց մասշտաբներով չեն կարող համեմատվել ԵՀՊ-ի հետ, բայց դրանցում կիրառվող մարտավարությունը հիմնվում էր աշխարհամարտերի փորձի վրա: Ավելին, առանձին դեպքերում զորահրամանատարներն աշխատում էին հնարավորինս ձեռնպահ մնալ նոր՝ չփորձված մարտավարական հնարքների կիրառումից³:

² Տե՛ս 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները, ԿԽՄԿ-ի հրատ., ե., 1999, էջ 19-306:

³ Այս մասին տե՛ս Վ. Мессенджер, Энциклопедия войны XX века, Москва, 2000, стр. 401-464.

Դա բացատրվում էր նրանով, որ տեղային պատերազմներում, առանց ավելորդ ձևական սահմանափակումների, օգտագործվում էին սովյալ պայմաններում կիրառելի բոլոր հնարքները: Ընդհանրացումներ կատարելու համար հսկայական նյութ կար, քանի որ, միևնույն մարտական գործողության ընթացքում ձեռք բերված փորձը բազմաթիվ հարցերում կիրառելի էր տարբեր մայրցամաքներում ու նույնիսկ տարբեր կլիմայական գոտիներում:

Այսպես.

- բևեռային գոտում ձեռք բերված փորձը հիմք հանդիսացավ ինչպես բարեխառն գոտում ձմռանը, այնպես էլ մյուս բոլոր գոտիների բարձր լեռնային շրջաններում ընթացող տեղային պատերազմներում մարտական գործողությունների կազմակերպման ժամանակ.
- հասարակածային շունգլիներում վարվող մարտական գործողությունների փորձը զգալիորեն նպաստեց մյուս գոտիների անտառապատ տեղանքում գործողությունների նախապատրաստման ու վարման բազմաթիվ հարցերի նշգրտման համար: Օրինակ, թեև ակնհայտ են 5.4-5.6 մմ տրամաչափի ձեռքի ավտոմատ հրազենի առավելությունները և 7.5-8 մմ-անոց հրազենից հրաժարվելը սկսվել է դեռևս 1960-ական թթ., սակայն սկզբից եթե հայտնի էին, որ փոքր տրամաչափի փամփուշտները, նյութերին դիպչելով, հեշտությամբ փոխում են թռիչքի ուղղությունը: Այդ պատճառով մեր օրերում ևս անտառապատ լեռներում վարվող մարտական գործողությունների ժամանակ նախընտրելի է համարվում «հին» հրազենը: Այս միտումն առավել ցայտուն կերպով դրսևորվեց 1994-1996 թթ. և 1999-2001 թթ. Չեչենական պատերազմների ժամանակ:

Այդուհանդերձ, հետագայի պատերազմները վկայեցին, որ ձեռք բերված փորձը ամենուրեք հավասարաչափ կիրառելի չէ: Այս հանգամանքով են պայմանավորված, հատկապես, լեռնային (լեռնաանտառ

ուային) տեղանքում ընթացող զինված ընդհարումների առանձնահատկությունները:

Աշխարհամարտերի ավարտից հետո, թերևս, միայն լեռնային մարտավարությունն էր, որ լրացուցիչ ճշգրտումների և ամբողջացման կարիք ուներ: Հարցն այն է, որ որքան էլ մեծ լիներ երկրորդ աշխարհամարտի ընդգրկումը, միևնույն է, պատերազմի ելքը վճռվել էր Եվրոպայում⁴: Բնականաբար, Եվրոպայում ծավալված ռազմական գործողություններին էլ սևեռվել էին ռազմական տեսաբանների հայացքները⁵: Բացի այդ, առանց այն էլ բարձր լեռներ չունեցող Եվրոպայի ամենաբարձր լեռնային շրջաններում մեծ ընդգրկում ունեցող ռազմական գործողություններ գրեթե չէին վարվել, իսկ եզակի «բացառությունները» հիմնարար վերլուծություններ կատարելու հնարավորություն չէին տալիս:

Մարտավարության ամբողջացման համար էական խոչընդոտ էր, որ ընդհուպ մինչև ԵՂ-ը շարունակվում էր լեռներում մեծամասշտաբ առձակատումից խուսափելու ձգտումը: Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918 թթ.) միակ մեծ լեռնային օպերացիան՝ 1917 թ. աշնանը Կապոռետտոյի մոտ գերմանա-ավստրիական զորքերի իրականացրած հարձակումն էր⁶: Ժամանակին օգնություն հասած անգլիական և ֆրանսիական 11 դիվիզիաները արագորեն վերականգնեցին իտալացիների պաշտպանությունը, հետևաբար, օպերացիան ցանկալի արդյունքների չհանգեցրեց ու պատերազմի ավարտման կամ մարտավարության զարգացման գործում էական դեր չխաղաց:

⁴ Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ռազմարվեստն ուսումնասիրող տեսաբանները սկսեցին ռազմական գործողությունների թատերաբեմերը (ԹԳԹ) բաժանել գլխավորի և երկրորդականի: Երկրորդ համաշխարհայինից հետո այս բաժանումը դարձել է համընդհանուր ընդունված: Այս մասին տե՛ս, **А.А. Строков, История военного искусства: капиталистическое общество периода империализма, М., 1967, стр. 271-274.**

⁵ Տե՛ս *Развитие тактики Советской Армии в годы Великой отечественной войны (1941-1945гг.)*, под общ. ред. **К. С. Колганова, М., 1958.**

⁶ **А.А. Строков, указ. соч., стр. 568-575.**

ԵՃՊ մարտական գործողությունների արդյունքները ևս ավելի շատ հարցեր էին թողել, քան նախանշել պատասխաններ⁷: Մասնավորապես՝ Ալլայան և Պիրենեյան լեռներում մարտական գործողություններ գրեթե չէին վարվել, որն էապես նվազեցնում էր ընդհանրացվող փորձը:

1941 թ. գարնանն այնքան ակնհայտ էր գերմանական մեքենայացված գորամիավորումների գերազանցությունը հարավսլավական և հունական հետևակային կամ հեծյալ զորամասերի նկատմամբ, որ չնայած վերջիններիս հերոսական պաշտպանությունը՝ Բալկաններում գերմանացիների կայծակնային հարձակումը «դատապարտված» էր հաջողություն⁸: Բացի այդ, գերմանացիները լեռներում մարտական գործողությունների վարման փորձ ունեցող զորամասեր ունենալով հանդերձ, կարողացան իրենց կամքը թելադրել հակառակորդին և հակամարտության ելքը վճռել նախալեռնային և դաշտավայրային շրջաններում վարվող մարտական գործողությունների ժամանակ⁹:

Կովկասի ճակատամարտի (1942 թ. հուլիս-1943 թ. հոկտեմբեր) արդյունքում հաղթող երկրների ռազմական տեսաբանների մեծ մասի շրջանում արմատավորվեց տեսակետ, համաձայն որի, համապատասխան մարտական ապահովության պայմաններում բարձր լեռնաշղթաները հնարավոր է անանցանելի բնական ամրոցների վերածել: Կարող է առաջին հայացքից տարօրինակ թվալ, բայց այս սխալ տեսակետի առանձին գրույթներ գերիշխող էին նաև հետագայում՝ նույնիսկ 1979-1989 թթ. Աֆղանական պատերազմից հետո: Այսպես, ԽՍՀՄ Ցամաքային զորքերի գլխավոր հրամանատարի կողմից համազորային և տանկային հրամանատարական բարձրագույն ուսումնարաններում ուսուցման հա-

⁷ Այս մասին տե՛ս *История военного искусства. Учебник для военных академий Советских Вооруженных Сил*, Москва, 1984, стр. 120-414.

⁸ Տե՛ս *Вторая мировая война 1939-1945 гг.: Военно-исторический очерк*, под общ. ред. С. П. Платонова, Москва, 1958, стр. 108-112.

⁹ *История второй мировой войны 1939-1945*, в 12-ти томах, т. 3, М., 1974, стр. 259-273.

մար նախատեսված «Մարտավարություն (վաշտ, գումարտակ)» դասագրքում կարդում ենք. «Դժվարանցանելի տեղամասեր և մեծաթիվ բնական արգելքներ ունեցող լեռնային տեղանքը ստորաբաժանումներին թույլ է տալիս ստեղծել անհաղթահարելի և կայուն պաշտպանություն (позволяет подразделениям создавать непреодолимую и устойчивую оборону) առավել լայն ճակատով՝ ներառնելով հակառակորդի գործողությունների համար առավել մատչելի ուղղությունները»¹⁰:

Արդեններում գերմանացիների 1944 թ. դեկտեմբերի հակահարվածը ևս մեկ անգամ վկայեց, որ զորավարների մեծ մասն անհրաժեշտ ուշադրություն չէր դարձնում լեռնային ՌԳԹ-երին: Այդուհանդերձ, հակահարվածն այսօր համարվում է ավելի շատ հակառակորդի (անգլոամերիկյան հրամանատարության) բացթողումներից հաջողությամբ օգտվելու, քան լեռնային տեղանքում հարձակման օրինակ¹¹:

Այս շարքում, թերևս, բացառություն է 1944 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Կարպատներն անցնելիս խորհրդային զորքերի՝ գերմանացիների կազմակերպված դիմադրության հաղթահարումը: Ի դեպ, նշենք, որ Կարպատյան լեռներում և Բալկաններում ծավալված գործողությունները լեռնային ենք համարել պայմանականորեն, քանի որ այդ տարածքներում եզակի են ծովի մակարդակից նույնիսկ 2000 մետր բարձրությունը գերազանցող գագաթները, իսկ Կարպատյան լեռների հիմնական մասի բարձրությունը 800-1200 մետր է:

Այդուհանդերձ, Կարպատներում հարձակողական մարտեր վարելու փորձն օգտագործելով էր, որ խորհրդային զորքերը մրրիկի պես անցան Մանջուրիայի լեռներով (Մեծ և Փոքր Խինգանի լեռնաշղթաներ):

¹⁰ Тактика (рота, батальон), ч. II, под ред. Е. И. Крылова, М., 1991, стр. 173.

¹¹ Б.Х. Лиддел-Гарт, Стратегия непрямых действий, Москва, 1957, стр. 426. В. Н. Лобов, Военная хитрость в истории войн, Москва, 1988, стр. 150-151.

Բավական է նշել, որ հարձակման տեմպն այդ ժամանակաշրջանի համար գրեթե անհավանական էր՝ օրական 120-150 կմ¹²:

Երկրորդ աշխարհամարտից հետո մինչև 1990 թ. ընկած միջոցին տեղի ունեցած մոտ 300 պատերազմներից միայն երկուսում (Կորեայում (1950-1953 թթ.) և Աֆղանստանում¹³) ձեռք բերված փորձն էր, որ շոշափելի ազդեցություն ունեցավ Արցախյան պատերազմի ռազմարվեստի հիմնական ուղղությունները որոշելիս: Ընդ որում, խոսքը ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմի կիրառած ռազմարվեստի մասին է¹⁴:

Ժամանակակից լեռնային պատերազմների մարտավարության համար կարևոր ուղենիշ է նաև Չեչենական վերջին պատերազմների ընթացքում կուտակված հարուստ փորձը, որը բանակաշինության արդի փուլում ուսանելի է մեզ համար:

¹² *История военного искусства*, под общ. ред. А. А. Строкова, Москва, 1966, стр. 509-510, 515.

¹³ Աֆղանական պատերազմն ընդունված է բաժանել չորս փուլերի.

1979թ. դեկտեմբեր-1980 թ. փետրվար՝ զորքերի ներխուժումը և տեղաբաշխումը տեղում:

1980թ. մարտ-1985թ. ապրիլ՝ խորհրդային ուժերի ակտիվ գործողությունները

1985թ. մայիս-1986թ. դեկտեմբեր՝ խորհրդային զորքերի գործողություններն աֆղանստանցիների աջակցությամբ:

1987թ. հունվար-1989թ. փետրվար՝ զորքերի դուրսբերումը:

Այս մասին տե՛ս **П. Аллан, Д. Клей, Афганский капкан: правда о советском вторжении**, Москва, 1999, стр. 237-308.

Վերլուծությունների ժամանակ մենք հիմնական ուշադրությունը դարձրել ենք երկրորդ և երրորդ փուլերի ռազմարվեստի վրա:

¹⁴ Վերջին շրջանի տեղային պատերազմների ժամանակ լեռներում (կտրտված տեղանքում) վարվող մարտական գործողությունների օրինակները բազմաթիվ են, սակայն եղած տեղեկությունները վկայում են, որ գրեթե չի օգտագործվել նույնիսկ արաբա-խարայելական հակամարտությունների ուսանելի փորձը: Պատճառը, թերևս, տեղեկատվության պակասն էր:

Աֆղանական և Չեչենական պատերազմների փորձն օգտագործելիս, պետք է նկատի ունենալ, որ այս պատերազմներում կողմերից մեկը (Աֆղանստանում՝ մոջահեդները, իսկ Չեչնիայում՝ անջատողականները) ակնհայտորեն զիջում էր մյուսին (խորհրդային և ՌԴ դաշնային զորքերին), որի պատճառով խուսափում էր բաց ճակատային ընդհարումներից և ամեն կերպ ձգտում հակամարտությունը վերածել պարտիզանական պատերազմի: Արցախյան պատերազմի տարիներին ազրբեջանական կողմը կենդանի ուժի, սպառազինության և մարտական տեխնիկայի քանակական կայուն գերազանցություն ուներ, սակայն այդ քանակական առավելություններն այնքան ճնշող չէին, որ հայկական կողմը հրաժարվեր դիրքային պայքարից¹⁵:

Լեռնաանտառային ՌԳԹ-ում վարվող տեղային զինված ընդհարումներից առաջինը Կորեայի պատերազմն էր: Արտակարգ մեծ թափով և ընդգրկումով վարվող այդ պատերազմի¹⁶ ընթացքում գրեթե ամբողջությամբ կրկնվում էր ԵՀՊ-ում կիրառված ռազմարվեստը՝ ընդհուպ մինչև օպերատիվ խտություն հաշվարկները¹⁷: Այդ պատճառով Կորեայի պատերազմի փորձը բազմաթիվ հարցերում պիտանի չէր անհամեմատ ավելի փոքր ընդգրկում ունեցող Արցախյան պատերազմում կիրառելու

¹⁵ Տե՛ս Հ. Պետրոսյանց, Տեղային պատերազմների առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը մարտավարության զարգացման վրա, եր., 2002, էջ 12-17:

¹⁶ Բավական է ասել, որ ԱՄՆ-ն ռազմական գործողություններում ներգրավել էր իր օդուժի 35%-ը: Դրա շնորհիվ էր միայն պահպանվում գերիշխանությունն օդում: Ծովում, Կորեայի ափերի մոտ, կենտրոնացվել էր ամերիկյան մոտ 200 ռազմանավ: Հարավի զորքերն ունեին մոտ 1 մլն. զինվոր և ավելի քան 1000 տանկ ու 1600 ինքնաթիռ: Այսպիսի մեծաթիվ ուժերը ղեկավարվում էին կենտրոնացված ձևով, որն էլ ավելի էր մեծացնում ռազմական գործողություններ վարելու նրանց կարողությունը: Տե՛ս Մ. Ա. Борчаев, “О теории военного искусства”, Военная мысль, №9, 1994, стр. 43-44.

¹⁷ Պաշտպանությունում օպերատիվ խտությունը կարող էր հասնել մինչև 1 գումարտակ/կմ, 10 տանկ/կմ, 40 թնդանոթ և ականանետ/կմ, 10 հակատանկային թնդանոթ/կմ: Տե՛ս История военного искусства, Учебник..., стр. 520.

համար: Մասնավորապես, Կորեայում շեշտը դրվում էր պաշտպանութ-
 թյան ճեղքման դասական տարբերակների վրա, որոնք կիրառելի էին
 հարթավայրային տեղանքում, իսկ լեռներում՝ միայն մեծաքանակ զոր-
 քերի առկայության պայմաններում¹⁸:

Միևնույն ժամանակ, մեր տարածաշրջանի հետ նմանություններն
 այնքան շատ էին, որ արցախյան ճակատներում կիրառելու համար ու-
 սանելի հարցեր ևս կային: Օրինակ՝ պաշտպանության ճեղքումը մեկ
 հիմնական և մեկ կամ երկու ջակցող (շեղող) հարվածներ հասցնելու
 միջոցով: Բացի այդ, Կորեայում, չնայած զորքերի մեծ խտությանը, մար-
 տական դասավորությունը, որպես կանոն, մեկ էշելոնով էր, որը մեր օ-
 րերի լեռնային պատերազմների համար դասական կարգ է դարձել:

Հատկանշական է, որ անկախ տեղանքի առանձնահատկություննե-
 րից, մարտական գործողությունների վրա էական ազդեցություն է թող-
 նում զորքերի մեքենայացման մակարդակը: Արդի պատերազմներում
 այն կայուն աճի միտում ունի: Գլխավորապես մեքենայացման բարձր
 մակարդակն էր պատճառը, որ պաշտպանական օպերացիաները զորա-
 շարժային էին. մեքենայացված զորամասերն արագ ու մեծ հեռավորու-
 թյամբ կտրվում էին հարձակվող զորքերից¹⁹:

Արցախում երկու կողմերն էլ հնարավորինս ձգտում էին վարել
 դիրքային պաշտպանություն, որը, սակայն, էական խոչընդոտ չդարձավ
 առանձին զորաշարժային օպերացիաների իրականացման համար: Վեր-
 ջին պահը ուշագրավ է, քանի որ հակամարտության ամբողջ ընթացքում
 երկու կողմից էլ մարտերի ինժեներական ապահովման մակարդակը
 ցածր էր: Հնարավոր չէ մատնացույց անել թեկուզ մեկ տեղամաս, որտեղ
 բրիգադի կամ գնդի ամբողջական՝ ինժեներական առումով բավարար
 սարքավորված, հագեցված ու մարտավարական բոլոր պահանջներին
 համապատասխանող, պաշտպանություն եղած լինի: Դրա պատճառը
 կենդանի ուժի պակասն էր, մանավանդ՝ հայկական կողմում: Այդ նկատի

¹⁸ Տե՛ս Ք. Յ. Огруд, *Ограниченная война*, Москва, 1960, стр. 231-251.

¹⁹ *История военного искусства*, Учебник ..., стр. 517-528.

ունենալով՝ հրամանատարները, պաշտպանություն կառուցելիս, ստիպված էին լինում ավելի շատ օգտագործել տեղանքը, կլիմայական պայմանները, հանկարծակի և հակառակորդի համար անսպասելի գործողությունները՝ դրանցով մասամբ փոխհատուցելով առկա բացը:

Լեռներում հիմնականում տեղանքն էր պատճառը, որ գրեթե ամենուր գրահատանկային զորքերը կիրառվում էին հետևակի անմիջական աջակցության համար՝ ինժեներական առումով համեմատաբար լավ պատրաստված ու հակատանկային միջոցներով հագեցված պաշտպանությունը ճեղքելիս: Հակատանկային միջոցները (բացի ձեռքի հակատանկային նռնականետները) տեղադրվում էին ճանապարհների և բացատների երկու կողմերում ու մեջտեղով անցնող տանկերին թևային կրակի տակ գցում: Ի դեպ, ժամանակակից համազորային մարտում պաշտպանությունը կազմակերպելիս առանցքային նշանակություն է ստանում հակառակորդի բոլոր կրակային միջոցների վրա խաչաձև կամ թևային կրակի վարման նախապատրաստումը²⁰:

Տեղանքը (հատկապես, եթե լեռներն անտառապատ են) թույլ է տալիս ճշտորեն կանխատեսել գլխավոր հարվածի հնարավոր ուղղությունները՝ տանկավտանգ տեղամասերը: Այդ տեղամասերում էլ փորվում են համատարած պաշտպանական խրամատներ: Դեռևս Կորեայում հստակորեն տարանջատվեցին հակամարտող կողմերի երկու մարտավարական համակարգեր.

«Ճանապարհների երկայնքով» կովող (մեծաթիվ անձնակազմ և մարտական տեխնիկա ունեցող կողմ),

ճանապարհների միջև՝ հակառակորդի «համեմատաբար թույլ թևերում» գործող (մարտական տեխնիկայի քանակով գիշող կողմ):

Հյուսիսային Կորեայի զինված ուժերը, աֆղան մոջահիդները, ինչպես նաև չեչենական զինված կազմավորումները հիմնականում հետևում էին երկրորդ համակարգին:

²⁰ См. тактика (рота, батальон), стр. 174.

Հիմնականում այս համակարգի շրջանակներում էր գործում նաև հայկական կողմը, հատկապես, Արցախյան պատերազմի առաջին երկու երեք տարիներին: Եվ դա բնական էր, քանի որ պատերազմի ամբողջ ընթացքում ադրբեջանցիները պահպանում էին կենդանի ուժի և մարտական տեխնիկայի քանակական գերազանցությունը: Ավելացնենք նաև, որ ադրբեջանական կողմն ուներ և կիրառում էր մարտական ինքնաթիռներ²¹, իսկ հայկականը՝ ոչ:

Նկատենք, որ թերի է այն տեսակետը, թե մարտական տեխնիկայի մեծ քանակի առկայությունն, ի վերջո, անվերապահորեն ռազմավարական հաղթանակի է հասցնում²²: Այս դրույթն առավել ևս սխալ է կտրուված տեղանքում մարտական գործողությունների վարման ժամանակ: Ասվածի ապացույցն են ինչպես Արցախյան պատերազմը, այնպես էլ 1994-1996 թթ. Չեչենական պատերազմը: Օրինակ՝ մեծաթիվ զրահատեխնիկայով լայնամասշտաբ հարձակում սկսած ադրբեջանական կողմը 1992 թ. ամռան մարտերում թեև հասավ որոշ հաջողությունների, սակայն կորցրեց 40 տանկ և 60 ՀՄՄ «այն դեպքում, երբ ղարաբաղյան կողմը գործնականում զրահատեխնիկա չկորցրեց»²³, իսկ չեչեն անջատողականների և դաշնային զորքերի մարտական տեխնիկայի քանակն անհամեմատելի էր:

Լեռներում մարտական տեխնիկայի կիրառումը պարտադիր չէ, որ միայն նեղ մարտավարական անհրաժեշտությունից բխի: Խորհրդային զորամասերի ռազմարվեստի բաղկացուցիչներից էր ռազմական գործողությունների սկզբում, զինված ընդհարման ծավալմանը զուգընթաց, հակառակորդին մարտական տեխնիկայով հոգբեանական ճնշման ենթարկելը, որը բավականաչափ նմանություններ ուներ Աֆղանստանում, Արցախում և Չեչնիայում: Դա պայմանավորված էր ոչ այնքան լեռնային

²¹ М. Жирохов, “Карабах: хроника воздушной войны”, *Авиамастер*, №6, 2000, стр. 2-8.

²² Այս մասին տե՛ս А. А. Дремков, “Нетрадиционные войны: сущность, проблемы, перспективы,” *Военная мысль*, №2, 1998, стр. 73.

²³ Ս. Ռ. Հաւաթթյան, *Ղարաբաղյան պատերազմ, եր., 2001, էջ 61:*

պատերազմի մարտավարության պահանջներով, որքան նույն «դպրոցին» պատկանող զինվորականության գործողություններով: Մասնավորապես, Աֆղանստանում խորհրդային ներխուժմանը հաջորդած ամիսներին զորքերին հրամայված էր մոջահիդների ակտիվության շրջաններում, բնակավայրերի միջով անցնելով, ցուցադրել բանակի ուժն ու հզորությունը²⁴: Զորքերը կրակ չէին բացում: Իրենց վրա հարձակումների ժամանակ նրանք ծավալվում, մարտակարգ էին ընդունում և տեխնիկայի օգնությամբ գործում հակառակորդի վրա: Այս ակցիաները կարճատև էին ու խորհրդային կողմից էական կորուստների պատճառ չէին դառնում: XIX դարի վերջի անգլիական հրացաններով զինված մոջահիդներն սկզբում որոշակի բարոյալքված էին խորհրդային ռազմական մեքենայի հզորությունից, սակայն ընդամենը մի քանի ամիս հետո այդ հուսալքվածությունն սկսեց վերանալ:

Արցախյան զինված հակամարտության առաջին երկու տարիներին (1990-1991թթ.) այս հնարքներն էր կիրառում նաև խորհրդային բանակի բացահայտ աջակցությունը վայելող ադրբեջանական կողմը: Տեխնիկական գերազանցությունն ի ցույց դնելով, գետաշենցիների դիմադրելու կամքն ի սկզբանե կոտրելու նպատակով էր, որ գյուղի հայաթափման գործողության ժամանակ կենտրոնացվեց ավելի քան հարյուր միավոր զրահատեխնիկա և մարտական ուղղաթիռներ: Գետաշենցիները հակատանկային և հակաօդային պաշտպանության միջոցներ չունեին և, ակնհայտ էր, որ այդ քանակի մարտական տեխնիկայի կենտրոնացման մարտավարական անհրաժեշտությունը չկար: Այսպիսի փորձեր ձեռնարկվեցին նաև հետագայում²⁵:

Նույնը փորձեցին կիրառել Չեչենական առաջին պատերազմի սկզբում (1994թ. դեկտեմբերին) ՌԴ զորքերը Գրոզնիի գրավման ժամանակ, սակայն ռազմականից ավելի հոգեբանական ազդեցություն գործելու այս փորձը ավարտվեց կատարյալ անհաջողությամբ: Նոր տարվա

²⁴ П. Аллан, Д. Клей, указ. соч., стр. 253-254.

²⁵ Տե՛ս, Ս. Ռ. Հաւաթթյան, նշվ. աշխ., էջ 47:

գիշերը Գրոզնիում զոհվեց դաշնային զորքերի ավելի քան 1.5 հազար զինվոր ու սպա²⁶: Էլ ավելի ծանր էր Գրոզնիի փողոցներում մարտական տեխնիկայի կիրառման փորձը. 131-րդ մայկոպյան բրիգադին տրված 26 տանկերից 20-ը խփվեց²⁷, իսկ բրիգադի մարտիկները կարողացան քաղաքից դուրս բերել 120 ՀՄՄ-ներից 18-ը²⁸: Այս օրինակը հնարավորություն է տալիս վերանայել լեռնային տեղանքում մարտական տեխնիկայի կիրառման մի շարք հարցեր, հատկապես, տեխնիկայի կիրառումը բնակավայրերում, երբ բնական արգելքներին ավելանում են նաև բետոնե ամրաշինական կառույցների դեր կատարող շենքերն ու շինությունները²⁹: Ի դեպ, Չեչենական առաջին պատերազմի ընթացքում ռուսական կողմը տանուլ տվեց մի շարք այլ հոգեբանական-տեղեկատվական օպերացիաներ³⁰ ևս ու ընդհանուր պարտություն կրեց քաղաքական, դիվանագիտական, տեղեկատվական և հոգեբանական հակամարտության ճակատներում³¹:

Պատերազմի սկզբնական փուլում, հակառակորդի մեծաթիվ զրահատեխնիկայի դեմ պայքարի կազմակերպման ժամանակ, մեծ նշանակություն էր ստանում համարձակ ու հակառակորդի համար անսպասելի

²⁶ Տե՛ս **А. Куликов, С. Лембик**, *Чеченский узел. Хроника вооруженного конфликта 1994-1996 гг.*, Москва, стр. 85-88.

²⁷ Տե՛ս *Войны второй половины XX века*, автор-сост. **А.Н. Гордиенко**, Минск, 1998, стр. 130.

²⁸ Տե՛ս **А. Куликов, С. Лембик**, *указ. соч.*, стр. 88.

²⁹ Մեկ և կես ամսում, 1994 թ. դեկտեմբերի վերջերից մինչև 1995 թ. փետրվար միայն Գրոզնիում դաշնային զորքերը կորցրել են ավելի քան 450 միավոր զրահատեխնիկա, որի կեսից ավելին (այդ թվում՝ 62 տանկ) անվերադարձ: Տե՛ս **А. Тарас**, *Малая война (организация и тактика боевых действий малых подразделений)*, Минск, 2000, стр. 318-319.

³⁰ Այս մասին օրինակներ տե՛ս **Г. Трошев**, *Моя война. Чеченский дневник окопного генерала*, Москва, 2002, стр. 113-117.

³¹ Տե՛ս **А.А. Дремков**, «Нетрадиционные войны: сущность, проблемы, перспективы», *Военная мысль*, №2, 1998, стр. 73.

գործողությունների իրականացումը: Օրինակ՝ 1981 թ. ապրիլ և սեպտեմբեր ամիսներին մոշահեղների հարձակումները Ղանդահար քաղաքի վրա, չեչեն զինյալների կողմից Գրոզնիի վերը նշված պաշտպանությունը, իսկ Արցախում՝ Շահումյանի շրջանի էրքեջ, Բուզլուխ և Մանաշիդ գյուղերի ազատագրումը (1991 թ. սեպտեմբեր)³²:

Պետք է նկատի ունենալ, որ լեռներում ընկնում է օդի ճնշումը և, համապատասխանաբար՝ մարդկանց գործունեության արդյունավետությունն ու տեխնիկայի հզորությունը: Ծովի մակարդակից 2000մ. բարձրության վրա հարթավայրային շրջաններից զորակոչված զինվորների մոտ շնչառության հետ կապված խնդիրներ են ծագում: 2500-3000մ-ի վրա զինծառայողներն ամսական կորցնում էին մինչև 8 կգ. քաշ: Լեռներում տեղաշարժումները ևս սահմանափակ էին, որոշ դեպքերում կազմելով 0.5-1 կմ/ժ, երբ սպառազինությունն ավելորդ բեռ էր դառնում զինվորի համար:

Առանձին դեպքերում, կարևոր էր, թե պատերազմի որ փուլում էին ծավալվում մարտական գործողությունները: Մեր կողմից քննարկվող բոլոր շորս տեղային պատերազմների սկզբում (առաջին փուլերում) պաշտպանությունը հանգում էր մարտավարական առումով կարևոր օբյեկտների պաշտպանությանը, որի համար ծագում է դրանց վրա ուշադրություն սևեռելու անհրաժեշտություն: Վերջին փուլում (փուլերում)՝ հակամարտող կողմերի աստիճանական հյուծումից հետո, նույնիսկ բարձր լեռնային շրջաններում պաշտպանության գիծը դառնում էր համատարած, իսկ առանձին դեպքերում կատարվում էին էշելոնացման փորձեր: Ի տարբերություն պաշտպանությունը չէշելոնավորելու ձգտմանը՝ լեռներում այն լայնորեն հարկավորվում³³ (յարուսավորվում) էր, որով ձեռք էր բերվում կրակի մեծ խտություն: Ընդ որում, այս միտու-

³² «Դարաբաղի ազատագրական պատերազմ 1988-1994: Հանրագիտարան», Եր., 2004, էջ 148, 841, 695:

³³ *Տե՛ս Тактика (рота, батальон)*, стр. 174.

մը վառ կերպով դրսևորվեց Արցախյան պատերազմի բոլոր փուլերում ու խրախուսելի է հետագայում կիրառելու համար:

Պատերազմի առաջին ամիսներին խորհրդային զորքերի համատարած պաշտպանական բնագծերի բացակայությունն էր պատճառը, որ Աֆղանստան ներխուժելուց ընդամենը մի քանի ամիս անց (1980 թ. գարնանը) խորհրդային զորքերի իրականացրած առաջին խոշոր օպերացիաների նպատակը Պակիստանից մոջահեդների ներթափանցումը կանխելն էր: Այս կարգի հարվածներին դիմակայելու համար մոջահեդների խմբերը կազմակերպչական առումով զգալի փոփոխություններ էին կրում: Եթե պատերազմի սկզբում նրանց գործողությունների արդյունավետությունը ցածր էր, ապա շուտով այն աճեց, նախ և առաջ, նոր կազմակերպության շնորհիվ: Մոջահեդները խուսափում էին բացահայտ առճակատումից, իսկ «հարվածիւր և փախիւր» մարտավարությունը նրանց դարձնում էր անչափ վտանգավոր և անորսալի: Պարզվեց, որ մոջահեդների այս նոր մարտավարությանը հակադրվելու համար խորհրդային զորքերի լեռնային մարտավարության զինանոցը ևս անչափ ազդատիկ է:

Խորհրդային ռազմական հայեցակարգում եթե պարտիզանական մարտավարության տարրերով պայքարի վարումը հնարավոր էր համարվում, ապա ուղղակիորեն բացառվում էր պարտիզանական շոկատների դեմ պատերազմի հավանականությունը: Այդ պատճառով երբեք լրջորեն չէր քննարկվել հակապարտիզանական մարտավարության մշակման հարցը և տեսական մոտեցումների ու իրականության միջև հակասություններ էին ծագում:

Խորհրդային բանակի ո՛չ զինվորներին, ո՛չ սպաներին և ո՛չ էլ գեներալներին երբեկից է՛ին պատրաստել տեղական բնակչության աջակցությունը վայելող պարտիզանական ջոկատների դեմ երկարատև պայքարի համար: Առաջադրված խնդիրների լուծման ժամանակ ճիշտ չկողմնորոշվելով՝ խորհրդային զորքերի միջին և բարձր հրամանատարներն ի վիճակի չէին լինում համարժեք որոշումներ ընդունել: Օրինակ՝

չնայած լեռներում գորաշարժերի հետ կապված լուրջ խնդիրներին՝ գործի էին դրվում տանկային գնդեր:

Մեքենայացված գորամասերը մեծ կրակային հզորություն ունեին, բայց չէին կարողանում էապես թուլացնել հակառակորդին: Մոշահեղներն արագորեն սովորեցին գրոհել շարասյուներով շարժվող այդ գորամասերի վրա ու պարզվեց, որ նրանք այդքան էլ թույլ հակառակորդ չեն: Սկսեց ի հայտ գալ լեռնահրաձգային դիվիզիաների բացակայությունամբ առաջացած բացը:

Այս դիվիզիաներն իրենց լավ էին դրսևորել Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կովկասի ու Կարպատների մոտ ծավալված մարտերում, սակայն վերացվել էին դեռևս 1950-ական թթ. սկզբներին: Լեռնահրաձգային դիվիզիաների վերացման հիմնական պատճառը միջուկային զենքով զինվող խորհրդային բանակի՝ որակապես նոր մարտական հնարավորություններն օգտագործելու ձգտումն էր: Բացի այդ, սառը պատերազմի «պարտադրանքով» ԽՍՀՄ-ում պատրաստվում էին հիմնականում եվրոպական ՌԳԹ-ում վարվելիք հակամարտությանը, որում բոլոր շնախատեսված դժվարությունները հնարավոր կլինե՞ր հաղթահարել զանգվածային ոչնչացման զենքերի (ՁՈՁ) կիրառումով: Ակնհայտ է, որ այս ուղղամարական համակարգի որդեգրումից հետո ԽՍՀՄ-ում գործերի լեռնային պատրաստությունամբ ոչ ոք լրջորեն չէր զբաղվելու:

Մարտավարության դասագրքերում լեռնային ՌԳԹ-ում մարտերի կազմակերպման առանձնահատկությունների մասին գրեթե ոչինչ չէր նշվում կամ տրված տեղեկատվությունն ուղղակի անբավարար էր: Այսպես, ԽՍՀՄ ՁՈԻ ինժեներական զորքերի ստորաբաժանումների հրամանատարների համար նախատեսված ուսումնական ձեռնարկում գործնականում ոչինչ չկա լեռներում ինժեներական ստորաբաժանումների գործողությունների առանձնահատկությունների մասին³⁴, իսկ վերը նշված «Մարտավարություն (վաշտ, գումարտակ)» 464 էջանոց ձեռնար-

³⁴ Тактико-специальная и техническая подготовка подразделений инженерных войск, под ред. А.П. Горбачева, М., 1988.

կում ընդամենը չորսական էջ է տրամադրված լեռներում պաշտպանության և հարձակման կազմակերպման խնդիրներին, իսկ ձեռնարկի մյուս բաժիններում (ստորաբաժանումների տեղաբաշխումը տեղում, պահակային պահպանություն, հետախուզություն, մարտական պահպանություն, ինժեներական և քիմիական ապահովում, պաշտպանություն ԶՈԶ-ից, մարտավարական քողարկում և այլն) լեռնային մարտավարության առանձնահատկությունների մասին ոչինչ չկա:

Առկա բացը լրացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկվեցին միայն 1982 թ.³⁵: Թուրքեստանյան օկրուգում սկսեց իրականացվել Աֆղանստան ուղարկվելու համար նախատեսված նորակոչիկների հատուկ լեռնային պատրաստություն, որի արդյունքում նորակոչիկների մարտական պատրաստության համակարգի՝ «երիտասարդ մարտիկի ծրագրի» (ԵՄԾ), տևողությունը մյուս ռազմական օկրուգների համեմատ գրեթե եռապատկվեց և տևում էր երեք ամիս: Նորակոչիկներին ուսուցանում էին լեռներում փոքր տարածությունների վրա և, հատկապես, գիշերը մարտի վարման գաղտնիքները³⁶: Դրանից հետո էլ ռազմական տեսաբանները նշում էին, որ ուսուցման այդ ժամաքանակն առանձին դեպքերում բավարար չէր լինում և խորհրդային զինվորների մեծ մասը չէր կարողանում մոշահեղների հետ մրցել՝ մարտում ժայռերի մագլցման կամ այլ կարգի տեղաշարժերի ժամանակ: Շուտով ԵՄԾ-ն երկարացվեց ևս երեք ամսով՝ կազմելով երկամյա պարտադիր զինվորական ծառայության մեկ քառորդը:

Մինչ այդ, դեռևս 1980 թ. երկրորդ կեսից, գործի էին դրվել հատուկ նշանակության ստորաբաժանումներ, որոնք ավելի լավ էին զինված և վարժեցված: Ի դեպ, լեռներում օդադեսանտային (դեսանտագրոհային) ուժերով լեռնահրաձգային զորամասերի բացը լրացնելու ռազմավարությունն, ընդհանուր առմամբ, իրեն արդարացրեց նաև Չչենական պա-

³⁵ П.А. Аллан, Д. Клей, указ. соч., стр. 334.

³⁶ Տե՛ս նույն տեղում:

տերազմների տարիներին և, թեև ՀՀ ԶՈՒ-ում կիրառելու հարցը վիճելի է³⁷, սակայն լուրջ մտորումների տեղիք է տալիս:

Մեր տարածաշրջանում լեռնահրաձգային ստորաբաժանումների կիրառման խնդիրը կարևոր ու հեռանկարային է թվում, որի պատճառով հարկ ենք համարում այն քիչ ավելի հանգամանորեն վերլուծել:

Հսկայական բանակների միջև ճակատամարտերը մնացել են անցյալում: Արդեն այսօր ակնհայտ է, որ մոտ ապագայի պատերազմները միտում ունեն վերածվելու էլիտար զորամասերի (ստորաբաժանումների), տիեզերական միջոցների, համակարգիչների, կապի հանգույցների, նորագույն ու գերճշգրիտ զենքի դիմակայություն: Ակնհայտ է, որ համազորային մարտի վարման համար պատրաստվող զորամասերն առանձին դեպքերում ի վիճակի չեն լինում ամբողջ ծավալով հաղթահարելու լեռնային (լեռնաանտառային) տեղանքում ծագող դժվարությունները: Շեշտենք, որ վերջին թերությունը պայմանավորված չէ այս կամ այն բանակի մարտական պատրաստության համակարգի անկատարությունամբ: Հարցն այն է, որ ժամանակակից հակառակորդը ոչ միշտ է կազմակերպված բանակի կամ ռազմաճակատի տեսքով հանդես գալիս: Բազմապիսի մարտական առաջադրանքներ կան, որոնց իրականացումը հնարավոր է միայն հատուկ պատրաստություն անցած արհեստավարժ զինվորների խմբերի ուժերով (նույնն է տրամաբանությունը ահաբեկիչների պարագայում): Այդ խմբերը, օգտագործելով տեղանքը, գաղտնի տեղաշարժվում են, հանկարծակի հայտնվում, ջախջախիչ հարված հասցնում ամենակարևոր կետերին և նույն ձևով անսպասելի հեռանում: Անակնկալ գրոհներին դիմակայելու համար պետք է ունենալ օպերատիվ ղեկավարման հուսալի կենտրոններ և լավագույն պատրաստություն անցած ընտիր ստորաբաժանումներ:

Ռազմական գիտություն, մարտական տեխնիկայի և սպառազինությունների զարգացման հետևանքով բանակներում էլսպես մեծացել է մասնագիտական խորը գիտելիքների տիրապետող անձնակազմով համալր-

³⁷ Այս մասին տե՛ս ստորև:

ված ստորաբաժանումների դերը: Մի քանի տասնյակ մարտիկ ունեցող այդպիսի ստորաբաժանումը դժվարանցանելի լեռներում առանձին մարտական առաջադրանքներ շատ ավելի արդյունավետորեն է կարողանում կատարել, քան ամբողջ մոտոհրաձգային զորամասը:

Վաղուց արդեն հասունացել է ՀՀ զինված ուժերի (ԶՈՒ) զորամիավորումներում լեռնահրաձգային ստորաբաժանումներ ստեղծելու հարցը: Դրանց առկայությունը զորամիավորումների հրամանատարներին հնարավորություն կտա օպերատիվորեն լուծել ծագող խնդիրները:

Օղադեսանտային (դեսանտագրոհային) ստորաբաժանումների կիրառումը նպատակահարմար չէ, քանի որ միաժամանակ մի քանի տեղամասերում զորամասերի դեսանտավորում իրականացնելու համար նախատեսված մեծաթիվ ռազմական ավիացիա մեր զինված ուժերը չունեն և տեսանելի հեռանկարում չեն ունենա: Իրապես, մեծաթիվ ավիացիայի բացակայությունը ՀՀ ԶՈՒ-ին հնարավորություն չի տա անսպասելի գործողություններ իրականացնել: Հակառակորդը, մեկ կամ երկու տեղամասում իջեցված դեսանտի մասին տեղեկատվությունը ստանալով, իր ամբողջ ռեզերվները կկենտրոնացնի նրանց դեմ՝ վստահ լինելով, որ այդ պահին մեր կողմն ի վիճակի չէ ավելին անել:

Շեշտենք, որ ավիացիայի անբավարար քանակի փաստի արձանագրումը չի կարող դիտվել որպես ՀՀ ԶՈՒ թուլության վկայություն: Մեր տարածաշրջանի մյուս պետությունները ևս չունեն միաժամանակ մի քանի տեղամասում դեսանտավորում իրականացնելու հնարավորություն ունեցող ավիացիա: Թերևս, որոշ վերապահումներ կարելի է անել միայն Թուրքիայի պարագայում, որի դեսանտային ուժերը թեև բավականին մեծաթիվ են, սակայն պատրաստվածության ու տեխնիկական ապահովվածության առումով հեռու են ժամանակակից ստանդարտներից և օր-օրի էլ ավելի են հեռ մնում: Հիմնավորելու համար նշենք, որ դեռևս 1980-ական թթ. կեսերին, ընդամենը մեկ կորպուսի ուժերով համազորային օպերացիաներն իրականացնելու համար, միայն ճեղքման տեղամասում առաջարկվում էր ունենալ 280-300 թնդանոթ և ականանետ, կրակային աջակցության համար նախատեսված մոտ 90 ուղղա-

Թիո և մարտավարական ավիացիայի մինչև 50 ինքնաթիռ³⁸: Եթե այս թվին ավելացնենք նաև հարձակման թևերում ներգրավվող մարտական տեխնիկական, դեսանտավորման համար նախատեսված ուղղաթիռները և արդյունքը բազմապատկենք հարձակմանը ներգրավվող զորամիավորումների քանակի վրա, ապա պատկերն ամբողջական կլինի:

Վերջին տարիների տեղային պատերազմների փորձը վկայում է, որ օպերատիվ խտուժյան այս պատկառելի մակարդակը ևս բավարար չի լինում ճեղքում իրականացնելու համար: Ընդ որում, հարվածին ներգրավվող մարտական տեխնիկայի քանակը կարող է աճել մի քանի անգամ: Օրինակ՝ Պարսից ծոցի 1990-1991թթ. պատերազմում ՄԱԿ-ի բազմազգ ուժերի կազմում գործող ԱՄՆ-ի 7-րդ բանակային կորպուսի միայն մեկ դիվիզիայի (1-ին մեքենայացված) հարվածային երկու խմբավորումներից յուրաքանչյուրն ուներ ավելի քան 300 տանկ և մոտ 200 ՀՄՄ³⁹: Հատկանշական է, որ հրետանու խտուժյունը մեծ չէր, սակայն կիրառվեցին հիմնականում կասետային արկեր (գիվիզիայի հարձակման շերտում՝ մոտ 11 հազար հրետանային արկ և ավելի քան 410 հրթիռ), որով հարվածների կրակային հզորությունն էապես մեծացավ⁴⁰: ՀՏ և ՀՕՊ միջոցների կատարելագործումն արդեն իսկ հանգեցրել է մի իրավիճակի, երբ լեռնային շրջաններում ևս մեծաթիվ մարտական տեխնիկայի կիրառման անհրաժեշտությունն անվիճելի է:

Ի դեպ, Արցախյան պատերազմի ընթացքում ևս իրականացվեցին մի քանի մեծամասշտաբ հարձակողական գործողություններ, որով հիմնավորվում է հետագայում դրանց իրականացման հավանականությունը: Օրինակ՝ 1992թ. հուլիսյան հարձակմանն ադրբեջանցիները ներգրավել էին ավելի քան 150 միավոր զրահատեխնիկա և մի քանի տաս-

³⁸ *История военного искусства*, под ред. П.А. Жилина, М., 1986, стр. 432-433.

³⁹ Л.С. Золотов, “Взгляды на развитие способов ведения общевойсковой операции и боя”, *Военная мысль*, №3, 1998, стр. 39.

⁴⁰ Նույն տեղում, էջ 40:

նյակ հազարների հասնող հետևակ⁴¹: Հետևաբար, պետք է կարծել, որ նոր պատերազմի սանձազերծման գործում «հաշոդուխյունների» հասնելու դեպքում մեր տարածաշրջանում ևս հնարավոր են, եթե ոչ ավիացիայի, ապա, գոնե զրահատեխնիկայի զգալի կուտակումներով իրականացվող հարձակումներ:

Լեոնահրաձգային ստորաբաժանումների (զորամասերի) պարագայում խնդիրն այլ է: Լեոնային հատուկ պատրաստություն անցած ստորաբաժանումների ստեղծման անհրաժեշտությունը մերժողների գլխավոր հակափաստարկը որակապես նոր կազմակերպական կառուցվածք ունեցող մարտական միավորների վրա ծախսվող գումարի հայթայթման հետ կապված հավանական դժվարություններն են: Հայտնի է, որ պետությունների մեծ մասն առայժմ ի վիճակի չէ հսկայական ներդրումներ կատարել նոր զորատեսակների ստեղծման համար անհրաժեշտ ծախսերը հոգալու, առավել ևս՝ մեծաթիվ արհեստավարժ բանակ պահելու համար: Որոշ մասնագետների կարծիքով, այսպիսի ստորաբաժանումներ չի կարողանա ստեղծել նաև Հայաստանի Հանրապետությունը:

Մեր կարծիքով, ՀՀ ԶՈՒ-ի մարտական պատրաստության ներկայիս մակարդակը թույլ է տալիս արդեն այսօր, առանց մեծ ծախսեր կատարելու, ստեղծել համապատասխան պատրաստություն ստացած զինծառայողներով համալրված, նախկինից որակապես տարբերվող, մարտական հնարավորություններ ունեցող լեոնահրաձգային գումարտակներ: Այդ ստորաբաժանումներն ի վիճակի կլինեն մարտական գործողություններ վարել դժվարին տեղանքում ձմռանը, հիմնական ուժերից կտրված լինելով և «գրսից» օգնություն չսպասելով, իսկ մարտիկների անթերի վարժվածությունն ու ստորաբաժանման հաստիքային սպառազինությունը լիովին բավարար է դժվարին առաջադրանքների կատարման համար: Կարևոր է նշել, որ գումարտակները փոքր մարտական միավորներ չեն և, անհրաժեշտության դեպքում, ի վիճակի կլինեն էական

⁴¹ Ս.Ռ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 47:

դերակատարում ունենալ բարձր լեռնային կամ լեռնաանտառային տեղանքում վարվող ամենակարևոր օպերացիաներում:

Լեռնահրաձգային ստորաբաժանումներն ուղղակի անփոխարինելի կլինեն պատերազմի առաջին փուլում՝ հակառակորդի առաջին հարվածի անդրադարձման ժամանակ: Կարևորագույն գերիշխող բարձունքների պահպանումով նրանք կարող են ոչ միայն առանձին զորամասի կամ զորամիավորման պաշտպանական օպերացիային ակտիվութուն հաղորդել, այլև հնարավորութուն տալ փոխելու ամբողջ պատերազմի ընթացքը: Առաջին հարվածի անդրադարձման գործում ունեցած այդ կարևոր առաքելությամբ լեռնահրաձգային գումարտակների կիրառման խնդիրը նեղ մարտավարական հարթությունից տեղափոխվում է օպերատիվ արվեստի և, նույնիսկ, ռազմավարության բնագավառ:

Միևնույն ժամանակ, պետք է կատարել մեկ կարևոր վերապահում: Գլխավոր հարվածն իրենց վրա վերցնելով՝ պատերազմի սկզբում առանցքային դերակատարում ունեցած լեռնահրաձգային գումարտակները մյուս փուլերում չեն կարողանա նույն հաջողությամբ գործել⁴²: Ասվածը հիմնավորող մի քանի պատճառներից բերենք երկուսը.

- առաջին հարվածն ամենահզորն է լինում, որի անդրադարձման ընթացքում պաշտպանվող ստորաբաժանումը ևս կարող է մեծաթիվ զոհեր տալ,
- հաջող աշտպանությունից հետո՝ հակահարձակման անցնելու փուլում, եթե մարտական գործողությունները տեղափոխվեն դաշտավայրային տեղանք, լեռնահրաձգային ուժերն ի վիճակի չեն լինի կատարելու նույն դերը և կգործեն որպես մոտոհրաձգային (հրաձգային) ստորաբաժանումներ:

Փորձի կուտակմանը զուգընթաց, նաև համապատասխան միջոցների առկայության դեպքում, լեռնահրաձգային գումարտակներից բացի,

⁴² Այս խնդրի լուծման համար մեր զինված ուժերում կան հատուկ նշանակության և դեսանտային զորամասեր, որոնց մարտական կիրառության հարցերն առանձին ուսումնասիրության կարիք ունեն:

կարելի է ստեղծել բանակային ենթակայության մեկ-երկու գունդ կամ գումարտակները վերակազմավորել գնդերի:

Որոշ կազմակերպական հարցերի լուծումից հետո ՀՀ ԶՈՒ սպայական դարբնոցի՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի վրա կարելի է դնել նաև համապատասխան սպայական կադրերով լեռնահրաձգային ստորաբաժանումների համալրման խնդիրը: Ինստիտուտի ուսումնանյութատեխնիկական բազան ու դասախոսական կազմի պատրաստվածություն մակարդակը, մեր կարծիքով, միանգամայն հնարավոր են դարձնում այս կարգի առաջադրանքների կատարման հնարավորությունը: Անհրաժեշտության դեպքում, թերևս կարող է ծագել որոշ նեղ մասնագետներով համալրելու, ինստիտուտի ուսումնական կենտրոնում կամ հրաձգարանում որոշ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն, որոնք ևս լուծելի խնդիրներ են:

Աֆղանստանում խորհրդային զորքերն այլ կերպ լուծեցին լեռնահրաձգային զորամասերի խնդիրը. զորամասերն աստիճանաբար դարձան թեթև ու շարժունակ⁴³: Նրանց հիմնական մարտական միավորը մոտոհրաձգային գումարտակն էր, որը ուժեղացվում էր օդադեսանտային ստորաբաժանումներով ու մարտական գործողություններ վարում 3-5 օրերի ընթացքում: Ավելի մեծ քանակությամբ էին կիրառվում մարտական ուղղաթիռները, որով նոր հաջողություններ արձանագրվեցին: Մի-24 ուղղաթիռները և Սու-25 գրոհային ինքնաթիռները լեռներում հետևակին տալիս էին այն աջակցությունը, որը հարթավայրերում տալիս էին տանկերը, մասամբ՝ հրետանին:

Արցախյան ճակատներում ուղղաթիռները մեծ ծավալով չեն կիրառվել, բայց դեռևս աֆղանական պատերազմի փորձով ապացուցվել էր լեռներում ուղղաթիռների անփոխարինելի լինելը: Չեչենական պատերազմների ընթացքում ռուսական ավիացիայի կիրառումը լրացուցիչ անգամ հիմնավորում է այս տեսակետի իրավացիությունը:

⁴³ *St'e u Voyny vtoroy poloviny XX veka*, стр. 363-365.

Ի տարբերություն օգուժի, խորհրդային գրահատեխնիկան Աֆղանստանի լեռներում կռվելու համար հարմարեցված չէր: ՀՄՄ-ների վրա տեղադրված դանդաղ կրակող 73 մմ-ոց հրանոթները 30 մմ-ոց ավտոմատ հրանոթներով փոխարինելուց հետո միայն տեխնիկան դադարեց թեթև թիրախ լինել մոշահեղների համար: Միևնույն ժամանակ նշենք, որ խորհրդային 40-րդ բանակը արագորեն մարտական փորձ էր կուտակում: Թերևս միայն ռազմական գրականությանը ծանոթանալը բավարար է պատկերացնելու համար, թե ինչ հսկայական ազդեցություն էր ունենում պատերազմը զորքերի ղեկավարման համակարգի զարգացման վրա: Բայց մարտավարության կատարելագործումը հանդիպում էր բազմաթիվ արգելքների: Մի կողմից, դժվարին տեղանքում, առանց ժամանակ կորցնելու, իրականացվում էին օպերացիաներ, որոնցում անհրաժեշտ ճկունությունը մեծ հարցականների տակ էր դնում դասագրքային «ճշմարտությունները»: Մյուս կողմից էլ բազմաթիվ էին օրինակները, երբ կանոնադրերից թույլ տրված աննշան շեղումները տասնյակ զոհերի պատճառ էին դառնում:

Աֆղանական պատերազմը վերջին երկու-երեք տասնամյակների տեղային պատերազմներից միակն էր, որի ընթացքում ձեռք բերված փորձը հասցրեց կանոնադրորեն ամրապնդվել դեռևս նախքան պատերազմի ավարտը: Նկատենք, որ մարտական կանոնադրություններում լեռնային տեղանքի վրա ուշադրություն սևեռելը չէր նշանակում, թե հիմնահարցով սկսել էին զբաղվել բոլոր մակարդակներում: Մասնավորապես, ինչպես նշեցինք վերևում, տակավին լուծված չէին կուտակված փորձը ուսումնական ձեռնարկներում, հրահանգներում կամ կատարման համար պարտադիր համարվող այլ փաստաթղթերում ներառելու խնդիրը:

Իրականության դեմ շմեղանչելու համար նշենք, որ ո՛չ հայկական և, առավել ևս, ո՛չ էլ ադրբեջանական ռազմական տեսաբանները, ընդհուպ մինչև Արցախյան պատերազմի ակտիվ հակամարտության փուլի ավարտը (1994 թ.), չկարողացան ընդհանրացնել մեծաթիվ զոհերի

գնով ձեռք բերված մարտական փորձը, և նոր մարտական կանոնադրություններ չգրվեցին⁴⁴:

Բազմիցս նշվել է նաև, որ խորհրդային զորքերի ամենաթույլ տեղը սերժանտից մինչև դասակի հրամանատար օղակն էր⁴⁵: Միակողմանի՝ միայն եվրոպական թատերաբեմում ռազմական գործողությունների վարելու համար նախապատրաստված որոշ սպաներ իրենց ծառայություն սկզբում չէին կարողանում ինքնուրույն որոշումներ ընդունել: Դա մի կողմից պայմանավորվում էր գոյություն ունեցող համակարգով, մյուս կողմից՝ կրթությամբ ու դաստիարակությամբ: Սակայն պետք է շեշտել, որ պետերի ու ենթակաների տարաձայնությունները հազվադեպ էին: Վտանգի պահերը համախմբում էին զինվորական կոլեկտիվները: Ստեղծվել էր ուշագրավ մի համակարգ, երբ ատելություն ու կուտակված լիցքերը ենթակաները թափում էին հակառակորդի վրա: Ռազմական դաստիարակության և կոլեկտիվիզմի մթնոլորտի ձևավորման այս համակարգը ուսանելի է ու հետագայում հանգամանալից ուսումնասիրման կարիք ունի:

Նախքան լեռներում մարտական գործողությունների նախապատրաստումը, պետք է նկատի ունենալ նաև, որ անհրաժեշտ է լինելու հսկայական ծավալի «ոչ մարտական» աշխատանքներ իրականացնել: Զորքի մատակարարման դժվարությունները ստիպում են ստեղծել զինամթերքի մեծ պաշարներ, ինչպես նաև մեծ ուժերով պաշտպանել թիկունքն ու հաղորդակցողիները (կոմունիկացիաները): Այսպես, թեև 1984 թվականից հատուկ նշանակության զորքերի կիրառման ակտիվացումը հարձակողական բնույթի հաղորդեց Աֆղանստանում տեղակայված խորհրդային զորքերի գործողություններին, սակայն նրանց ուժերի զգալի մասը զբաղված էր ինժեներական բնույթի աշխատանքներով և կայազորային ծառայությամբ (մոտոհրաձգային 55 գումարտակներից 32-ը նախատեսված էին հրամանատարական կենտրոնների և այլ

⁴⁴ Տե՛ս ՀՀ ԶՈՒ Մարտական կանոնադրություն, մաս II, եր., 1999: Մաս III, եր., 1997:

⁴⁵ П.А. Аллан, Д. Клей, Указ. соч., стр. 380-384.

օբյեկտների պաշտպանության համար, իսկ աֆղանա-պակիստանյան սահմանն ամբողջությամբ փակելու համար պետք էր կրկնապատկել Աֆղանստանում տեղակայված զորքերի քանակը⁴⁶):

Հասկանալի է, որ մեկ հոգվածում հնարավոր չէ վերլուծել լեռնային պատերազմների բոլոր առանձնահատկությունները: Այս հոգվածն առկա բացը լրացնելու մեկ փորձ է միայն: Տակավի՛ն ուսումնասիրության կարոտ են գիշերային մարտերը, դարաններն ու ծուղակները: Թեև վերջին տարիներին այս և մի շարք այլ խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվել են⁴⁷, սակայն բազմաթիվ հարցեր կան, որոնց պատասխանելով, հնարավորություն կստանանք հարստացնել մեր ՌԳԹ-ում մարտական գործողությունների վարման գիտանոցը և է՛լ ավելի ամրացնել պետական սահմանները:

Դարեր շարունակ հայոց ռազմավեստը զարգացել է հեռու և մոտիկ «հարևանների» ոտնձգություններից երկրի պաշտպանության ռազմավարությունում տեղանքի կարևոր դերի գիտակցման պայմաններում: Լեռները հուսալի պահպան են եղել ավերվող շրջանների բնակչության համար և դրանց հենվելով է միշտ պատերազմել հայոց բանակը: Գիտության և տեխնիկայի զարգացման պայմաններում այսօր հնարավորություն ունենք էլ ավելի արդյունավետորեն օգտագործել լեռների պաշտպանող հատկությունները: Դրանք ամբողջապես օգտագործելը և հաջորդ սերունդներին պետությունն է՛լ ավելի հզորացած վիճակում հանձնելը՝ այսօր ապրողներին սրբազան պարտականությունն է:

⁴⁶ П.А. Аллан, Д. Клей, Указ. соч., стр. 87.

⁴⁷ Հ. Պետրոսյանց, Կրակային դարանների կիրառումը տեղային պատերազմներում, Հայկական բանակ, №1-2, 2002, էջ 92-96: